



Երևան, 27 Յուլիս, 2020

Տերութափական Աղօթք

(միասնաբար արտասանուած)

Իմասկութիւն Հօր Յիսուս, Կոուր ինձ իմասկութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Պղորմէ ինծի, ով Ասպուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.

քու անսահման գլութեամբ իմ յանցանքս ներէ ինծի:

Ամրողութեամբ մաքրէ զիս ին անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ:

Գիվեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միփքէս չ'ելլեր:

Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,

գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկապես:

Ուսպի արդար ես, ինչ վճիռ ալ արձակես.

իրաւացի ես, ինչ պապիծ ալ սահմանես:

Ուսպի ներումիդ ցողով սրբէ զիս, եւ պիփի մաքրուիմ,

լուա զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիփի ըլլամ:

Ցնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինծի,

եւ փառապած ուկորներս պիփի ցնծան:

Նկափի մի՛ առներ մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:

Մաքուր սիրով մը հասպապէ մէշս, ով Ասպուած,

նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:

Ներկայութենէս մի՛ զրկեր զիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիու թող զրէ զիս:

Փրկութեանդ ցնծութիւնը փուր ինծի, եւ քու կամքիդ հնազանդ հոգի դիր իմ մէշս:

Որպէսզի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ, եւ մեղաւորները քեզի դառնան:

ՃԱՐԱԿԱՆ-ԱՂՕԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմէնասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, նսջեցելոց արքայութիւն:

Առի Վաստած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեղ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
ազ քո հովաննի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի զիշերի,
ի նստիլ ի տան, ի զնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՅՆ ՆԻՒԹԸ
ՀԱՅ
ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ
52 ԳԼՈՒԽ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՆԿՈՒՄԸ (52:1-11)

Այս գլուխը ամբողջութեամբ կրկնութիւն է Դ Թագաւորաց 24 և 25 գլուխներուն, ուր կը ներկայացնի Երուսաղէմի և Տաճարի կործանումը, ապա Յուդայի ժողովուրդին դեպի Բարեկոն գերի փարուիլը: Երեւոյթ մը, որուն մասին քանի մը առիթով Տերը ցոյց փուաւ, պարզամես Երեմիա մարգարէին, որպէսզի Երեմիա մարգարէն ալ փոխանցէ ժողովուրդին:

Սեղեկիա Յուդայի վերջին թագաւորն է 21 փարեկան, 11 փարի կը թագաւորէ, անիկա Տիրոց առջեւ չարութիւն ըրաւ: Իր չարութիւն ընելուն համար, Տիրոց բարկութիւնը Երուսաղէմի և Յուդայի վրայ բորբոքեցաւ (3 հմր): Ահա Նաբուգողոնոսոր թագաւորը իր բոլոր զօրքովը Երուսաղէմի վրայ կու գայ ու երկրին վրայ սով կը փիրէ: Ինչ որ պարզամած էր Երեմիա մարգարէին այդպէս ալ կը պարահի: Միւս կողմէ, Սեղեկիա թագաւորը պարփական է Նաբուգողոնոսորին, որովհետեւ Նաբուգողոնոսորը ինը նշանակեց Սեղեկիան իբրեւ թագաւորը: Սեղեկիա ձեւով մը կ'ուզէ ընդիմանալ Նաբուգողոնոսորի դէմ, դաշնակից ըլլալով Եզիպիտոսին ու շրջակայ պետութիւններուն հենք: Սակայն, ի զուր, որովհետեւ Նաբուգողոնոսոր կը յարձակի, անոր զօրքը կը հելքապնդէ Սեղեկիա թագաւորը, կը բռնեն կը վանին Բարեկոն: Բարեկոնի թագաւորը Սեղեկիային գրաները անոր աչքերուն առջեւ կը մորթէ, իսկ Սեղեկիայի աչքերը կը կուրցնէ եւ կը բանբարկէ մինչեւ իր մահուան օրը (8-11 հմր): Սեղեկիա օրին ականջ փուաւ սուր մարգարէին՝ Անանիային, փոխանակ ականջ փալու Երեմիային:

ՏԱՃԱՐԻՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ (52:12-23)

Ահա ոչ միայն Երուսաղէմը կը կործանի ու թագաւորը գերի կը փարուի, այլև Տաճարը կը կործանի, ու անոր ամբողջ հարսփութիւնը կը փարուի Բարեկոն, ինչպէս կը կարդանք Դանիէլի մարգարեւութեան մէջ (1:1-2): Այսպես ներկայացնուածը մաս մըն է կ'ըսէ, իսկ Երմիայի 52 գլուխի այս հափուածը կը ներկայացնէ ամբողջութեամբ գրաւել ու դեպի Բարեկոն փարուիլը:

ՅՈՒԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲԱԲԵԼՈՆ ԿԸ ՏԱՐՈՒԻ (52:24-34)

Հեփաքրքրական է, որ այսպես նշուած ու փրուած մանրամասնութիւնները չկան Թագաւորաց գիրքին մէջ: Այսպես կը ներկայացնի գերիներու թիւը եւ հանգրուանները, թէ քանի հանգրուաններով գերի փարուեցան դեպի Բարեկոն: